ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով լազերային հեռաչափերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

01 մարտի 2023թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մամյան, Ա. Հովսեփյան, Վ. Մկրտչյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	**Լազերային հեռաչափեր**	**2 600 000**

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«**ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1**» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	**«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 00179816, ՀՀ, 0001, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող., 19 շենք Անի Պլազա Հյուրանոց/Բիզնես Կենտրոն/ 11սենյակ, հեռ. 041-40-41-21, reforcegroupllc@gmail.com
1	**ՀՈՎ ԱՐՍ ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 04236834, Նոր Խարբերդ 2փ, 52 բն. 5, հեռ. 091-40-32-60, nerses.manukyan@yahoo.com
1	**ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 08228471, ք. Երևան, Արամ Խաչատրյան 25, բն.12, հեռ. 093-99-99-89, argus.solutionss@gmail.com
1	**Սոս Մովսիսյան ԱՁ**	ՀՎՀՀ՝ 67029261, գ. Լեռնավան 19փ., տ. 2/1, հեռ. 077-62-15-59, 077-16-14-51, account.able@mail.ru, Sos-995@mail.ru

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը արձանագրեց, որ ներկայացված հայտերում /հայտում առկա փաստաթղթերում/ առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝

3.1.1«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- Ներկայացված Հավելված 1.3-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 4.1.5 կետում պետք է գրել Հայաստանի Հանրապետություն, 4.3.3 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման /Վարչատարածքային միավորը՝ Երևան/:

3.1.2 ՀՈՎ ԱՐՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

-Ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը, «Տեխնիկական բնութագրեր» սյունակում հստակեցնել երաշխիքի ժամկետը:

-Ներկայացված Հավելված 1.3-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 1.2.1 կետում պետք է գրել հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը, 1.2.2 կետում՝ հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը, 4.1.5 կետում պետք է գրել Հայաստանի Հանրապետություն:

-Ներկայացված լիազորագրին կցված չէ լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

3.1.3.ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

-Ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) «Ֆիրմայի անվանումը» սյունակը սխալ է լրացված, «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը, «Տեխնիկական բնութագրեր» սյունակում հստակեցնել երաշխիքի ժամկետը:

-Ներկայացված Հավելված 1.3-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 4.1.5 կետում պետք է գրել Հայաստանի Հանրապետություն, 4.3.3 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման /Վարչատարածքային միավորը՝ Երևան/:

3.1.4.Սոս Մովսիսյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

-Ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) «Ապրանքային նշանը» սյունակը սխալ է լրացված, «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը, «Տեխնիկական բնութագրեր» սյունակում բացակայում է «Ապրանքը նոր է և չօգտագործված: Երաշխիքի

ժամկետ է սահմանվում՝ 365 օր հաշված մատակարարման օրվանից: Ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը իրականացնում է վաճառողը» նախադասությունները:

-Ներկայացված լիազորագրին կցված չէ լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 03.03.2023թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել **07.03.2023թ. ժամը 12:00-ին**, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. 07.03.2023թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 07.03.2023թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերը շտկվել և ներկայացվել են:

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը ըստ աճման կարգի և գնման հայտով սահմանած գինը

Չափաբաժին 1՝ Լազերային հեռաչափերի ձեռքբերում					
h/h	**Մասնակցի անվանումը**	**Գնման հայտով սահմանած գին**	**Գին /առանց ԱԱՀ/**	**ԱԱՀ**	**Գին /ներառյալ ԱԱՀ/**
1	**«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**	**2 600 000**	1 415 000	283 000	**1 698 000**
2	**ՀՈՎ ԱՐՍ ՍՊԸ**		2 165 000	433 000	2 598 000
3	**ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ**		2 330 000	0	2 330 000
4	**Սոս Մովսիսյան ԱՁ**		2 575 000	0	2 575 000

7. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

8. 09.03.2023թ. Հանձնաժողովը որոշեց՝

8.1 **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած **«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:**

8.2 **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան:

8.3 Հաստատել թիվ **«ՀՀ ՔԿ ԳՀԱՊՁԲ-ԼՀ-23/1»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Գագիկ Արշակյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Արթուր Մամյան
2.Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Անժելա Հովսեփյան
3.Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Վահագն Մկրտչյան
4.Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Սիլվա Գարանյան
5.Գնման Պատասխանատու /հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Նաիրա Բաբայան